**ՄԱՐՄԱՇԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԳՐԵՆԱԿԱՆ ՊԻՏՈՒՅՔՆԵՐԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ**
**N ՄՀ-ԳՀԱՊՁԲ-19/6-1**

գ. Մայիսյան «16» Ապրիլի 2019թ.

Մարմաշեն համայնքապետարանը ի դեմս համայնքի ղեկավար՝ Կարեն Արշակյանի, որը գործում է «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Մարմաշեն համայնքապետարանի աշխատակազմ» համայնքային կառավարչական հիմնարկի կանոնադրության հիման վրա, այսուհետ «Գնորդ», մի կողմից, և «Նորմա Քարտ» ՍՊԸ-ը, ի դեմս տնօրեն Գ.Թերզյան-ի, որը գործում է ՍՊԸ_-ի կանոնադրության հիման վրա, այսուհետ «Վաճառող» մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

## 1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով (այսուհետ՝ պայմանագիր) սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման-ժամանակացույցով նախատեսված ապրանքը (այսուհետ՝ ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

## 2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

**2.1 Գնորդն իրավունք ունի՝**

2.1.1 Ապրանքը պայմանագրով սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել ապրանքից, եթե մատակարարման ժամկետները խախտվել են 5 օրից ավելի:

2.1.2 Եթե հանձնվել է անպատշաճ որակի՝ պայմանագրով նախատեսված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք՝

ա) պահանջել հատուցելու ապրանքի անպատշաճ որակի լինելու պատճառով իր կատարած ծախսերը.

բ) չընդունել ապրանքն՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ապրանքը պայմանագրին համապատասխանող որակի ապրանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.3 կետով նախատեսված տուգանքը.

գ) հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ապրանքի համար վճարված գումարը:

2.1.3 Եթե հանձնվել է պայմանագրով որոշվածից պակաս քանակի ապրանք, ապա՝

ա) պահանջել լրացնելու ապրանքի պակաս հանձնված քանակը,

բ) հրաժարվել հանձնված ապրանքից և դրա համար վճարելուց, իսկ եթե ապրանքի համար վճարվել է, ապա պահանջել վերադարձնելու վճարված գումարը և վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.4 Եթե հանձնվել է տեսակի պայմանի խախտմամբ ապրանք, իր ընտրությամբ՝

ա) ընդունել տեսակի վերաբերյալ պայմանին համապատասխանող ապրանքը և հրաժարվել մնացած ապրանքներից.

բ) հրաժարվել հանձնված բոլոր ապրանքներից և պահանջել վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը.

գ) պահանջել տեսակի վերաբերյալ պայմանին չհամապատասխանող ապրանքի անհատույց փոխարինում պայմանագրով նախատեսված տեսակին համապատասխան ապրանքով:

2.1.5 Վաճառողի կողմից մատակարարման ժամկետների խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել ապրանքի մատակարարման նոր ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.6 Վաճառողից պահանջել հատուցելու վնասները, եթե Գնորդը Վաճառողի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով պայմանագրի լուծումից հետո ողջամիտ ժամկետում այլ անձից ավելի բարձր, սակայն ողջամիտ գնով գնել է ապրանք՝ պայմանագրով նախատեսվածի փոխարեն՝ պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով, ինչպես նաև ապրանքն այլ անձից ձեռք բերելու համար իր կատարած բոլոր անհրաժեշտ և ողջամիտ ծախսերը:

2.1.7 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը.

2.1.7.1 Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում.

բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 5 օրից ավելի,

2.1.8 Զննել ապրանքը և հայտնաբերված թերությունների մասին

2.2.1 Կատարել պայմանագրին համապատասխան մատակարարված ապրանքի ընդունումն ապահովող բոլոր անհրաժեշտ գործողությունները:

2.2.2 Վաճառողի հանձնած ապրանքից պայմանագրին համապատասխան հրաժարվելու դեպքում, ապահովել այդ ապրանքի պատասխանատու պահպանությունը և դրա մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2.3 Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված ապրանքն ընդունելու դեպքում Վաճառողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

2.2.4 Ապրանքի քանակի, տեսականու, որակի մասին պայմանագրի պայմանները խախտելու մասին Վաճառողին ծանուցել թերությունը հայտնաբերելուց հետո անմիջապես կամ այն բանից հետո՝ ողջամիտ ժամկետում, երբ պայմանագրի համապատասխան պայմանի խախտումը պետք է հայտնաբերված լիներ՝ ելնելով ապրանքի բնույթից և նշանակությունից:

2.2.5 Պայմանագրի 2.3.3 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Վաճառողին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

**2.3 Վաճառողն իրավունք ունի՝**

2.3.1 Գնորդից պահանջել ընդունելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված ապրանքը:

2.3.2 Գնորդից պահանջել վճարելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված և Գնորդի կողմից ընդունված ապրանքի համար իրեն վճարման ենթակա գումարները:

2.3.3 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Գնորդն էականորեն խախտել է պայմանագիրը:

2.3.3.1 Գնորդի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե բազմիցս խախտվել են ապրանքի համար վճարելու ժամկետները:

2.3.4 Գնորդի համաձայնությամբ վաղաժամկետ մատակարարել ապրանքը:

**2.4 Վաճառողը պարտավոր է՝**

2.4.1 Գնորդին հանձնել ապրանքը՝ պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով:

2.4.2 Ապահովել ապրանքի մատակարարումը պայմանագրի 2.1.2 կետի բ) ենթակետին և (կամ) 2.1.5 կետին համապատասխան՝ Գնորդի կողմից սահմանված ժամկետներում:

2.4.3 Գնորդին հանձնել երրորդ անձանց իրավունքներից ազատ ապրանք:

2.4.5 Գնորդին հանձնել պայմանագրով նախատեսված որակի և քանակի ապրանք՝ պայմանագրով նախատեսված ժամկետներում և հասցեով, իսկ Գնորդի պահանջով տրամադրել ապրանքի որակը հավաստող՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված փաստաթղթեր:

2.4.6 Թերի մատակարարում թույլ տալու դեպքում, պայմանագրով նախատեսված կարգով, լրացնել թերի մատակարարվածը:

2.4.7 Հետ տանել Գնորդի կողմից պայմանագրի 2.2.2 կետին համապատասխան՝ պատասխանատու պահպանության ընդունված ապրանքը կամ ողջամիտ ժամկետում տնօրինել այն, ինչպես նաև հատուցել ապրանքը պատասխանատու պահպանության ընդունելու, այն իրացնելու կամ Վաճառողին վերադարձնելու հետ կապված անհրաժեշտ ծախսերը:

2.4.8 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.9 Գնորդին հանձնել ապրանքի պատկանելիքները և համապատասխան փաստաթղթերը:

2.4.10 Պայմանագրի 2.1.7 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Գնորդին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.4.11 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Գնորդին:

## 3. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Պայմանագրի գինը կազմում է 654885/ Վեց հարյուր հիսունչորս հազար ութ հարյուր ութանասունհինգ/ ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն[1]: Պայմանագրի գինը ներառում է պայմանագրի կատարումն ապահովելու նպատակով Վաճառողի կողմից կատարվելիք բոլոր վճարները (ծախսերը), այդ թվում՝ հարկերը, տուրքերը, փոխադրման, ապահովագրման ծախսերը, պարգևավճարները և ակնկալվող շահույթը:

Ապրանքի մատակարարման գինը կայուն է և Վաճառողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Գնորդը նվազեցնելու այդ գինը:

---

3.2 Պայմանագրի գնից՝ մինչև __________ ՀՀ դրամը, Գնորդը փոխանցում է Վաճառողի բանկային հաշվին՝ որպես կանխավճար: Կանխավճարի մարումն իրականացվում է հանձնման-ընդունման արձանագրությունների հիման վրա կատարվող վճարումներից նվազեցումներ (պահումներ) կատարելու ձևով: Յուրաքանչյուր դեպքում նվազեցվող (կանխավճարի մարվող) գումարի չափը որոշվում է պայմանագրի գնի նկատմամբ վճարվող գումարի համամասնությամբ[2]:

3.3 Գնորդն իրեն մատակարարված ապրանքի դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Վաճառողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 20-ը:

## 4. ԱՊՐԱՆՔԻ ՈՐԱԿԸ ԵՎ ԵՐԱՇԽԻՔԸ

4.1 Վաճառողը երաշխավորում է մատակարարված պպրանքի որակի համապատասխանությունը պետական ստանդարտի պահանջներին:

4.2 Հիմնական միջոց հանդիսացող ապրանքների համար երաշխիքային ժամկետ է սահմանվում Գնորդի կողմից ապրանքն ընդունվելու օրվան հաջորդող օրվանից հաշված ________ օրացուցային օրը: Եթե երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել մատակարարված ապրանքի թերություններ, ապա Վաճառողը պարտավոր է իր հաշվին, Գնորդի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները[3]:

## 5. ԱՊՐԱՆՔԻ ՀԱՆՁՆՈՒՄԸ ԵՎ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ

5.1 Մատակարարված ապրանքն ընդունվում է Գնորդի և Վաճառողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսվում է Գնորդի և Վաճառողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ապրանքի մատակարարման համար նախատեսված օրը ներառյալ Վաճառողը Գնորդին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1) և հանձնման-ընդունման արձանագրության __2___ օրինակ (հավելված N 3):

5.2 Հանձնման-ընդունման արձանագրությունը ստորագրվում է, եթե մատակարարված ապրանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին: Հակառակ դեպքում պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքները չեն ընդունվում, հանձնման-ընդունման արձանագրությունը չի ստորագրվում և Գնորդը՝

ա) հարցի կարգավորման համար ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները.

բ) Վաճառողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

5.3 Գնորդը հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված _3_ աշխատանքային օրվա ընթացքում Վաճառողին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակը կամ ապրանքը չընդունելու պատճառաբանված մերժումը:

5.4 Եթե պայմանագրի 5.3 կետով սահմանված ժամկետում Գնորդը չի ընդունում մատակարարված ապրանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատակարարված ապրանքը համարվում է ընդունված և պայմանագրի 5.3 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Գնորդը Վաճառողին է տրամադրում իր կողմից հաստատված հանձնման-ընդունման արձանագրությունը:

## 6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Վաճառողը պատասխանատվություն է կրում հանձնած ապրանքի որակի և պայմանագրով նախատեսված մատակարարման ժամկետների պահպանման համար:

6.2 Վաճառողի կողմից պայմանագրով նախատեսված ապրանքի մատակարարման ժամկետների խախտման դեպքում Վաճառողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ մատակարարման ենթակա, սակայն չմատակարարված ապրանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Վաճառողին վճարման ենթակա գումարների հետ:

---

[2] *Վաճառողը կարող է հրաժարվել առաջարկված կանխավճարից կամ դրա մի մասից: Ընդ որում կնքվելիք պայմանագրում կանխավճարը սահմանվում է Գնորդի և Վաճառողի միջև համաձայնեցված չափով: Եթե պայմանագրով չի նախատեսվում կանխավճարի հատկացում, ապա սույն կետը հանվում է նախագծից:*

[3] *Սույն կետը հանվում է պայմանագրի նախագծից, եթե գնվելիք ապրանքը չի հանդիսանում հիմնական միջոց:Իսկ եթե գնվելիք ապրանքը*

6.4 Գնորդի կողմից պայմանագրի 3.3 կետով նախատեսված ժամկետի խախտման համար Գնորդի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.5 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.6 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտվորությունները լրիվ կատարելուց:

## 7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

## 8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի՝ պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ պայմանագիրը կնքելու նատակով կազմակերպված գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Վաճառողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Գնորդը իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Գնորդը չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Վաճառողի համար առաջացող վնասների կամ ...ց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Գնորդի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ապրանքի ծավալների կամ ձեռք բերվող ապրանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.6 Եթե պայմանագիրն իրականացվում է գործակալության պայմանագիր կնքելու միջոցով.

1) Վաճառողը պատասխանատվություն է կրում գործակալի պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար.

8.7 Ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Վաճառողի առաջարկության առկայության դեպքում, պայմանով, որ Գնորդի մոտ չի վերացել ապրանքի օգտագործման պահանջը: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված

8.8 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Վաճառող կամ Գնորդ) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Վաճառողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Վաճառողը:

8.9 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.10 Վաճառողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Գնորդը հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Վաճառողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:

8.11 Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.12 Պայմանագիրը կազմված է _13_ էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.13 Պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

## 10. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

**ԳՆՈՐԴ**

_Մարմաշեն համայնքապետարան
ՀՀ Շիրակի մարզ, գյուղ Մայիսյան, փողոց 1, շենք 29
ՀՎՀՀ՝ 05546014
h/h 900212364096
ՀՀ ֆինանսների նախարարության աշխատակազմի գործառնական վարչություն

Համայնքի ղեկավար ------------------------ Կ. Արշակյան
/ստորագրություն/

**ՎԱՃԱՌՈՂ**

<<Նորմա-Քարտ>> ՍՊԸ
Ք. Գյումրի, Կոմիսարներիփող. 26, տուն 90
Բանկ՝ ԻնեկոԲանկ ՓԲԸ, Գյումրի մ/ճ
ՀՀ - 205012202748-1001
ՀՎՀՀ 05533538
Էլ. հասցե՝ norma-card@mail.ru

Տնօրեն ------------------------ Գ. Թերզյան
/ստորագրություն/
Կ.Տ.

*Անհրաժեշտության դեպքում պայմանագրում կարող են ներառվել ՀՀ օրենսդրությանը չհակասող դրույթներ:*

*Հավելված N 1*
*«      »          20 թ. կնքված*
*ծածկագրով պայմանագրի*

## ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

| Ապրանքի | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| հրավերով նախատեսված չափաբաժնի համարը | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | անվանումը և ապրանքային նշանը** | արտադրողի անվանումը և ծագման երկիրը** | տեխնիկական բնութագիրը | չափման միավորը | միավոր գինը/ՀՀ դրամ | ընդհանուր գինը/ՀՀ դրամ | ընդհանուր քանակը | մատակարարման | | |
| | | | | | | | | | հասցեն | ենթակա քանակը | Ժամկետը*** |
| 1 | 30199430 | Նշումների թուղթ , /գունավոր/ | Sticki Valong Չինաստան | Թուղթ նշումների համար, 1 տուփ/ 100 թերթ/, 5 գույն, կպչուն, /9*9/, տրցակներով: | հատ | 179.8 | 8990 | 50 | Գ. մայիսյան | 50 | Ապրիլ-մայիս |
| 2 | 30199430 | Նշումների թուղթ . | Sticki Valong Չինաստան | Թուղթ նշումների համար, /9*9*9 սպիտակ/: | հատ | 48 | 14400 | 30 | Գ. մայիսյան | 30 | Ապրիլ-մայիս |
| 4 | 30199420 | Էջանիշ թղթյա , | Սկաոլետ ՀՀ | Էջաբաժանիչ թղթյա 76*25մմ, կպչուն, տարբեր գույների | հատ | 150 | 7500 | 50 | Գ. մայիսյան | 50 | Ապրիլ-մայիս |
| 5 | 22811130 | Տետր 12 թերթ , | Սկաոլետ ՀՀ | 12 թերթանոց տետր, սպիտակությունը առնվազն 90 %, վանդակավոր և տողային, կազմը՝ գունավոր նկարներով կամ միագույն | հատ | 24 | 7500 | 300 | Գ. մայիսյան | 300 | Ապրիլ-մայիս |
| 6 | 22811130 | Տետր 96 թերթ , | Սկաոլետ ՀՀ | 96 թերթանոց տետր, սպիտակությունը առնվազն 90 %, վանդակավոր և տողային, կազմը՝ գունավոր նկարներով կամ միագույն | հատ | 190 | 9500 | 50 | Գ. մայիսյան | 50 | Ապրիլ-մայիս |
| 7 | 30196100 | Բլոկնոտ մեծ , | Սինալինե ՀՀ | Նոթատետր 128*203 մմ, 50 էջ 60 gsm վերևից պարույրով, վանդակավոր | հատ | 180 | 1800 | 10 | Գ. մայիսյան | 10 | Ապրիլ-մայիս |

| | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 9 | 30197230 | Թղթապանակ/բարակ / | Deko Levar ARG Չինաստան | Թղթապանակ կոշտ ստվարաթղթե կազմով, համապատասխան չափի կոնակով (ծավալով), մետաղյա ամրացման հարմարանքով A4 (210x297) մմ ձևաչափի թերթերի համար:կապույտ, սև | հատ | 580 | 116000 | 200 | Գ. մայիսյան | 200 | Ապրիլ-մայիս |
| 10 | 30197230 | Թղթապանակ միջին | Deko Levar ARG Չինաստան | Թղթապանակ կոշտ ստվարաթղթե կազմով, համապատասխան չափի կոնակով (ծավալով), մետաղյա ամրացման հարմարանքով A4 (210x297) մմ ձևաչափի թերթերի համար: | հատ | 580 | 116000 | 200 | Գ. մայիսյան | 200 | Ապրիլ-մայիս |
| 11 | 30197230 | Թղթապանակ 60 թերթանի | Deko Levar ARG Չինաստան | Թղթապանակ կոշտ պոլիէթիլենային թաղանթներով կազմով, համապատասխան չափի կոնակով (ծավալով), A4 (210x297) մմ ձևաչափի թափանցիկ ֆայլերով | հատ | 500 | 10000 | 20 | Գ. մայիսյան | 20 | Ապրիլ-մայիս |
| 12 | 30197230 | Թղթապանակ 100-թերթանի | Deko Levar ARG Չինաստան | Թղթապանակ կոշտ պոլիէթիլենային թաղանթներով կազմով, համապատասխան չափի կոնակով (ծավալով), A4 (210x297) մմ ձևաչափի թափանցիկ ֆայլերով | հատ | 700 | 14000 | 20 | Գ. մայիսյան | 20 | Ապրիլ-մայիս |
| 13 | 30197233 | Թղթապանակ թելակապով | Deko Levar ARG Չինաստան | Ստվարաթղթից կազմեր երկարատև պահման գործերի համար, թելակապերով, ստվարաթղթի խտությունը՝ 230 գ/քմ, A4 (210x297) մմ ձևաչափի փաստաթղթերի համար: | հատ | 65 | 3250 | 50 | Գ. մայիսյան | 50 | Ապրիլ-մայիս |
| 15 | 30197230 | Թղթապանակ ռեգիստր | Deko Levar ARG Չինաստան | Թղթապանակ ռեգիստր կոշտ A4 ֆորմատի, երկօղակային, 100 հատ կողային հաստությունը 8 սմ գույնը սև, 100 հատ կողային հաստությունը 3-3,5 սմ գույնը սեռի: | հատ | 580 | 116000 | 200 | Գ. մայիսյան | 200 | Ապրիլ-մայիս |
| 16 | 30197231 | Թղթապանակ, պոլիմերային թաղանթ, ֆայլ | Impulse ՀՀ | Թափանցիկ պոլիմերային թաղանթ, 80-100 միկ. հաստությամբ, A4 ձևաչափի թղթերի համար,արագակարներին ամրացնելու հնարավորություն: | տուփ | 1300 | 130000 | 100 | Գ. մայիսյան | 100 | Ապրիլ-մայիս |
| 17 | 30197231 | Թղթապանակ /ռեզինով/ | Deko Levar ARG Չինաստան | Թղթապանակ ռեզինով, պլաստիկ հաստ կազմով A4, կապույտ, սև, կանաչ. | հատ | 240 | 4800 | 20 | Գ. մայիսյան | 20 | Ապրիլ-մայիս |
| 18 | 30197231 | Թղթապանակ /կոճակով/ | Deko Levar ARG Չինաստան | Թղթապանակ կոճակով, պլաստիկ հաստ կազմով A4, կարմիր, սև, սպիտակ. | հատ | 60 | 1800 | 30 | Գ. մայիսյան | 30 | Ապրիլ-մայիս |

| | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 21 | 30192125 | Մարկեր | Princo Թայվան | տարբեր գույների մարկերներ սովորական | հատ | 80 | 4000 | 50 | Գ. մայիսյան | 50 | Ապրիլ-մայիս |
| 23 | 30192720 | Մարկեր DVD,CD /սև/ | Princo Թայվան | Մարկեր սև գույնի դիսկերի վրա գրելու համար | հատ | 119.8 | 3595 | 30 | Գ. մայիսյան | 30 | Ապրիլ-մայիս |
| 33 | 35821400 | Դրոշ | ՀՀ | ՀՀ դրոշներ 150սմ x 300սմ չափսի, պատրաստված 100% պոլիէսթերային, անջրաթափանց գործվածքից, գործվածքի խտությունը՝ ոչ պակաս 90 գ/մ2 –ից, գույները տպագրված, գունավորման կայունությունը՝ ըստ ԳՕՍՏ 9733.0 ստանդարտի, դրոշի կողային եզրերը մշակված երեսակողմից չերևացող զարդակարով և եզրակարված 1սմ լայնությամբ ծալքակարով (ըստ ԳՕՍՏ 12807 ստանդարտի), ձախակողմյա հատվածում 3սմ լայնությամբ եզրակ, եզրակի հետադարձ կարված հատվածի վրա ամրացված 50սմ հեռավորությամբ 4 լյուվերսներ: Դրոշի գույները պետք է համապատասխանեցված լինեն ՀՀ կառավարության 2016 թվականի սեպտեմբերի 2-ի «ՀՀ դրոշի և ՀՀ զինանշանի ընդհանուր տեխնիկական պայմանները սահմանելու մասին» N 888-Ն որոշմամբ հաստատված N 1 հավելվածի 13-րդ կետով տրված գունային մոդելների արժեքներին: | հատ | 2900 | 58000 | 20 | Գ. մայիսյան | 20 | Ապրիլ-մայիս |
| 34 | 30141200 | Հաշվասարք, գրասենյակային | Kenko Չինաստան | 12 նիշանի սեղանի միջին չափ, սնուցման 2 աղբյուր գործողությունները ցուցադրումով վահանակի վրա, ինքնալիցքավորվող: | հատ | 1450 | 7250 | 5 | Գ. մայիսյան | 5 | Ապրիլ-մայիս |
| 42 | 30199230 | Ծրար 115*225մմ | Libra Չինաստան | պատրաստված սպիտակ կրաֆտ թղթից, որի խտությունը կազմում է 80-90գր/մ², փականը ուղիղ եւ տեղադրված է ծրարի երկար կողմով, փականի ներսի մասը մշակված է ջրային սոսինձով, որը փակված է պաշտպանիչ բարակ թղթով, չափսը 115x225մմ | հատ | 10 | 10000 | 1000 | Գ. մայիսյան | 1000 | Ապրիլ-մայիս |

| | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 43 | 30193700 | Թղթադարակ | Deko Levar ARG Չինաստան | Թղթադարան, 4 բաժանմունք, մետաղյա, 5 կտորից, դարակի չափերը՝ բարձրությունը 25 սմ, լայնությունը 35 սմ, երկարությունը 30 սմ, սև գույնի: | հատ | 3500 | 10500 | 3 | Գ. մայիսյան | 3 | Ապրիլ-մայիս |

Մատակարարումը իրականացվում է մատակարարի կողմից:

ապրանքի մատակարարման ժամկետը, իսկ փուլային մատակարարման դեպքում՝ առաջին փուլի մատակարարման ժամկետը, պետք է սահմանվի առնվազն 20 օրացուցային օր, որի վարկը կատարվում է պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայմանն ուժի մեջ մտնելու օրը, բացառությամբ այն դեպքի, երբ րված մասնակիցը համաձայնում է ապրանքը մատակարարել ավելի կարճ ժամկետում: Մատակարարման վերջնաժամկետը չի կարող ավել լինել, քան տվյալ տարվա դեկտեմբերի 15-ը:

ե իրավերով չի նախատեսվում առաջին տեղը զբաղեցրած մասնակցի կողմից առաջարկվող ապրանքի՝ ապրանքային նշանի և արտադրողի անվանման վերաբերյալ տեղեկատվության կայացում, ապա «անվանումը և ապրանքային նշանը» սյունակից հանվում է «և ապրանքային նշանը», իսկ «արտադրողի անվանումը և ծագման երկիրը» սյունակից՝ «արտադրողի վանումը և» բառերը:

**ԳՆՈՐԴ**

_Մարմաշեն համայնքապետարան
ՀՀ Շիրակի մարզ, գյուղ Մայիսյան, փողոց 1, շենք 29
ՀՎՀՀ՝ 05546014
h/h 900212364096
ՀՀ ֆինանսների նախարարության աշխատակազմի գործառնական վարչություն

Համայնքի ղեկավար ---------- Գ. Արշակյան
/ստորագրություն/

**ՎԱՃԱՌՈՂ**

<<Նորմա-Քարտ>> ՍՊԸ
Ք. Գյումրի, Կոմիտասի պող. 26, տուն 90
Բանկ՝ ԻնեկոԲանկ ՓԲԸ, Գյումրի մ/ճ
ՀՀ - 205012202748-1001
ՀՎՀՀ 05533538
Էլ. հասցե norma-card@mail.ru

Տնօրեն ---------- Գ. Թերզյան
/ստորագրություն/
Կ.Տ

*Հավելված 3.1*
*«     »     20 թ. կնքված*
*ծածկագրով պայմանագրի*

ԱԿՏ N_______
պայմանագրի արդյունքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _______________-ի (այսուհետ` Գնորդ) և _______________
Գնորդի անվանումը Վաճառողի անվանումը
(այսուհետ` Վաճառող) միջև 20 թ. _______________ -ին կնքված N _______________
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը

պայմանագրի շրջանակներում Վաճառողը 20 թ. _______________-ին հանձնման-ընդունման նպատակով Գնորդին հանձնեց ստորև նշված ապրանքները.

| Ապրանքի | | |
|---|---|---|
| անվանումը | չափման միավորը | քանակը (փաստացի) |
| | | |
| | | |

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_______________
ազգանուն, անուն
_______________
Ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ`

_______________
ազգանուն, անուն
_______________
ստորագրություն

*Հավելված N 3*
*« » 20 թ. կնքված*
*ծածկագրով պայմանագրի*

Պայմանագրի կողմ

______________________

______________________

գտնվելու վայրը ______________

հհ ______________________

հվհհ ______________________

Պատվիրատու

______________________

______________________

գտնվելու վայրը ______________

հհ______________________

հվհհ______________________

## ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
## ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

*« » « » 20 թ.*

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝

______________________________________________________________

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «__________________» 20 թ.
Պայմանագրի համարը՝ __________
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատակարարել է հետևյալ ապրանքները՝

| N | Մատակարարված ապրանքների | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | անվանումը | տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը | քանակական ցուցանիշը | | կատարման ժամկետը | | Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/ | Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/ |
| | | | ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի | փաստացի | ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի | փաստացի | | |
| | | | | | | | | |
| | | | | | | | | |

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ապրանքը հանձնեց

______________________
ստորագրություն

______________________
ազգանուն, անուն

Կ.Տ.

Ապրանքը ընդունեց

______________________
ստորագրություն

______________________
ազգանուն, անուն

Կ.Տ.

*Հավելված N 2*
*«    »      20  թ. կնքված*
*ծածկագրով պայմանագրի*

# ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

| հրավերով նախատեսված չափաբաժնի համարը | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | անվանումը | դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2019թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում** | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | ապրիլ | մայիս | հունիս | հուլիս | օգոստոս | սեպտեմբեր | հոկտեմբեր | նոյեմբեր | դեկտեմբեր | Ընդամենը |
| 1 | 30199430 | Նշումների թուղթ /զունավոր/ | | 449,5 | 899 | 1348,5 | 1798 | 2247,5 | 4495 | 6742,5 | 8990 | 8990 |
| 2 | 30199430 | Նշումների թուղթ | | 720 | 1440 | 2160 | 2880 | 3600 | 7200 | 10800 | 14400 | 14400 |
| 4 | 30199420 | Էջանիշ թղթյա | | 375 | 750 | 1125 | 1500 | 1875 | 3750 | 5625 | 7500 | 7500 |
| 5 | 22811130 | Տետր 12 թերթ | | 375 | 750 | 1125 | 1500 | 1875 | 3750 | 5625 | 7500 | 7500 |
| 6 | 22811130 | Տետր 96 թերթ | | 475 | 950 | 1425 | 1900 | 2375 | 4750 | 7125 | 9500 | 9500 |
| 7 | 30196100 | Բլոկնոտ մեծ | | 90 | 180 | 270 | 360 | 450 | 900 | 1350 | 1800 | 1800 |
| 9 | 30197230 | Թղթապանակ/բարակ / | | 5800 | 11600 | 17400 | 23200 | 29000 | 58000 | 87000 | 116000 | 116000 |
| 10 | 30197230 | Թղթապանակ միջին | | 5800 | 11600 | 17400 | 23200 | 29000 | 58000 | 87000 | 116000 | 116000 |
| 11 | 30197230 | Թղթապանակ 60 թերթանի | | 500 | 1000 | 1500 | 2000 | 2500 | 5000 | 7500 | 10000 | 10000 |
| 12 | 30197230 | Թղթապանակ 100- թերթանի | | 700 | 1400 | 2100 | 2800 | 3500 | 7000 | 10500 | 14000 | 14000 |
| 13 | 30197233 | Թղթապանակ թելակապով | | 162,5 | 325 | 487,5 | 650 | 812,5 | 1625 | 2437,5 | 3250 | 3250 |
| 15 | 30197230 | Թղթապանակ ռեգիստր | | 5800 | 11600 | 17400 | 23200 | 29000 | 58000 | 87000 | 116000 | 116000 |
| 16 | 30197231 | Թղթապանակ, պոլիմերային թաղանթ, ֆայլ | | 6500 | 13000 | 19500 | 26000 | 32500 | 65000 | 97500 | 130000 | 130000 |
| 17 | 30197231 | Թղթապանակ /ռեզինով/ | | 240 | 480 | 720 | 960 | 1200 | 2400 | 3600 | 4800 | 4800 |
| 18 | 30197231 | Թղթապանակ /կոճակով/ | | 90 | 180 | 270 | 360 | 450 | 900 | 1350 | 1800 | 1800 |
| 21 | 30192125 | Մարկեր | | 200 | 400 | 600 | 800 | 1000 | 2000 | 3000 | 4000 | 4000 |
| 23 | 30192720 | Մարկեր DVD,CD /սև/ | | 179,75 | 359,5 | 539,25 | 719 | 898,75 | 1797,5 | 2696,25 | 3595 | 3595 |
| 33 | 35821400 | Դրոշ | | 2900 | 5800 | 8700 | 11600 | 14500 | 29000 | 43500 | 58000 | 58000 |
| 34 | 30141200 | Հաշվասարք, | | 362,5 | 725 | 1087,5 | 1450 | 1812,5 | 3625 | 5437,5 | 7250 | 7250 |

| | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | գրասենյակայի | | | | | | | | | | |
| 42 | 30199230 | Ծրար 115*225մմ | | 500 | 1000 | 1500 | 2000 | 2500 | 5000 | 7500 | 10000 | 10000 |
| 43 | 30193700 | Թղթադարակ | | 525 | 1050 | 1575 | 2100 | 2625 | 5250 | 7875 | 10500 | 10500 |
| 1 | 30199430 | Նշումների թուղթ /գունավոր/ | | 449,5 | 899 | 1348,5 | 1798 | 2247,5 | 4495 | 6742,5 | 8990 | 8990 |
| 2 | 30199430 | Նշումների թուղթ | | 720 | 1440 | 2160 | 2880 | 3600 | 7200 | 10800 | 14400 | 14400 |
| 4 | 30199420 | Էջանիշ թղթյա | | 375 | 750 | 1125 | 1500 | 1875 | 3750 | 5625 | 7500 | 7500 |
| 5 | 22811130 | Տետր 12 թերթ | | 375 | 750 | 1125 | 1500 | 1875 | 3750 | 5625 | 7500 | 7500 |
| 6 | 22811130 | Տետր 96 թերթ | | 475 | 950 | 1425 | 1900 | 2375 | 4750 | 7125 | 9500 | 9500 |
| 7 | 30196100 | Բլոկնոտ մեծ | | 90 | 180 | 270 | 360 | 450 | 900 | 1350 | 1800 | 1800 |
| 9 | 30197230 | Թղթապանակ/բարակ / | | 5800 | 11600 | 17400 | 23200 | 29000 | 58000 | 87000 | 116000 | 116000 |
| 10 | 30197230 | Թղթապանակ միջին | | 5800 | 11600 | 17400 | 23200 | 29000 | 58000 | 87000 | 116000 | 116000 |
| 11 | 30197230 | Թղթապանակ 60 թերթանի | | 500 | 1000 | 1500 | 2000 | 2500 | 5000 | 7500 | 10000 | 10000 |
| 12 | 30197230 | Թղթապանակ 100- թերթանի | | 700 | 1400 | 2100 | 2800 | 3500 | 7000 | 10500 | 14000 | 14000 |
| 13 | 30197233 | Թղթապանակ թելակապով | | 162,5 | 325 | 487,5 | 650 | 812,5 | 1625 | 2437,5 | 3250 | 3250 |
| 15 | 30197230 | Թղթապանակ ռեգիստր | | 5800 | 11600 | 17400 | 23200 | 29000 | 58000 | 87000 | 116000 | 116000 |
| 16 | 30197231 | Թղթապանակ, պոլիմերային թաղանթ, ֆայլ | | 6500 | 13000 | 19500 | 26000 | 32500 | 65000 | 97500 | 130000 | 130000 |
| 17 | 30197231 | Թղթապանակ /ռեզինով/ | | 240 | 480 | 720 | 960 | 1200 | 2400 | 3600 | 4800 | 4800 |
| 18 | 30197231 | Թղթապանակ /կոճակով/ | | 90 | 180 | 270 | 360 | 450 | 900 | 1350 | 1800 | 1800 |
| 21 | 30192125 | Մարկեր | | 200 | 400 | 600 | 800 | 1000 | 2000 | 3000 | 4000 | 4000 |
| 23 | 30192720 | Մարկեր DVD,CD /սև/ | | 179,75 | 359,5 | 539,25 | 719 | 898,75 | 1797,5 | 2696,25 | 3595 | 3595 |
| 33 | 35821400 | Դրոշ | | 2900 | 5800 | 8700 | 11600 | 14500 | 29000 | 43500 | 58000 | 58000 |
| 34 | 30141200 | Հաշվասարք, գրասենյակային | | 362,5 | 725 | 1087,5 | 1450 | 1812,5 | 3625 | 5437,5 | 7250 | 7250 |
| 42 | 30199230 | Ծրար 115*225մմ | | 500 | 1000 | 1500 | 2000 | 2500 | 5000 | 7500 | 10000 | 10000 |
| 43 | 30193700 | Թղթադարակ | | 525 | 1050 | 1575 | 2100 | 2625 | 5250 | 7875 | 10500 | 10500 |

**ԳՆՈՐԴ**

_Մարմաշեն համայնքապետարան
ՀՀ Շիրակի մարզ, գյուղ Մայիսյան, փողոց 1, շենք 29
ՀՎՀՀ՝ 05546014
հ/հ 900212364096
ՀՀ ֆինանսների նախարարության աշխատակազմի գործառնական վարչություն

Համայնքի ղեկավար՝ ______________ Կ. Արշակյան
/ստորագրություն/

**ՎԱՃԱՌՈՂ**

<<Նորմա-Քարտ>> ՍՊԸ
Ք. Գյումրի, Կոմիսարների փող. 26, տուն 90
Բանկ՝ ԻնեկոԲանկ ՓԲԸ, Գյումրի մ/ճ
ՀՀ 205012202748-1001
ՀՎՀՀ 05533538
Էլ. հասցե՝ norma-card@mail.ru

Տնօրեն ______________ Գ. Թեփոյան
/ստորագրություն/
Կ.Տ

*Հավելված 10*

<<«ՄՀ-ԳՀԱՊՁԲ-19/6-1»>>* ծածկագրով

Գնանշման հարցման ընթացակարգի հրավերի

ՏՈՒԺԱՆՔԻ ՄԱՍԻՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N

(պայմանագրի կատարման ապահովում)

ք. Գյումրի <<___>> ապրիլի 2019 թ.

**<<Նորմա-Քարտ>> ՍՊԸ**, ի դեմս Ընկերության տնօրեն՝ Գալուստ Թերզյան, որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա՝ (այսուհետև՝ Ընկերություն), սույնով միակողմանի սահմանում է հետևյալ տուժանքի վճարման համաձայնությունը.

## 1.ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅԱՆ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Ընկերությունը մասնակցում է << Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Մարմաշեն համայնքապետարանի աշխատակազմ>> **ՀԿՀ** (այսուհետ՝ Պատվիրատու) կողմից կազմակերպված՝ <<գրենական պիտույքների>> ձեռքբերման <<*«ՄՀ-ԳՀԱՊՁԲ-19/6-1*>> ծածկագրով գնման ընթացակարգին:

1.2 Որպես գնման ընթացակարգի արդյունքում կնքվելիք պայմանագրի կատարման ապահովում, Ընկերությունը Պատվիրատուին է ներկայացնում սույն տուժանքի համաձայնագիրը և կից վճարման պահանջագիրը՝ լրացված և հաստատված Ընկերության կողմից՝ համաձայն ՀՀ կենտրոնական բանկի հաստատած՝ <<Վճարահաշվարկային գործառնությունների կատարման ժամանակ կիրառվող փաստաթղթերի նվազագույն վավերապայմանների և դրանց լրացման կանոնների>>:

1.3 Ընկերության կողմից գնման ընթացակարգի արդյունքում կնքված պայմանագիրը չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու դեպքում Պատվիրատուն սույն տուժանքի համաձայնագիրը և կից վճարման պահանջագիրը (այսուհետ՝ պայմանագրի կատարման ապահովման վճարման պահանջագիր) ներկայացնում է Ընկերությանը սպասարկող բանկին (այսուհետ՝ Բանկ)՝ այդ մասին գրավոր տեղեկացնելով Ընկերությանը:

1.4 Բանկը պայմանագրի կատարման ապահովման վճարման պահանջագիրը ընդունում է կատարման՝ Պատվիրատուի կողմից սույն տուժանքի համաձայնագրի և գնման ընթացակարգի արդյունքում կնքված պայմանագրի չկատարման կամ ոչ պատշաճ կատարման փաստը հաստատող փաստաթղթի բնօրինակները, որոնք նշվում են պայմանագրի կատարման ապահովման վճարման պահանջագրում, Բանկին տրամադրվելու դեպքում:

1.5 Պայմանագրի կատարման ապահովման վճարման պահանջագրում նշված գումարի վճարման հետևանքով առաջացած ռիսկերի (Ընկերության կրած վնասների) համար Բանկը պատասխանատվություն չի կրում:

1.6 Սույն համաձայնագիրը և կից պայմանագրի կատարման ապահովման վճարման պահանջագիրը Բանկ ներկայացնելուց հետո, Բանկից անկախ պատճառներով, տասն աշխատանքային օրվա ընթացքում Պատվիրատուին գումարը չվճարվելու դեպքում, Պատվիրատուն չվճարման հետ կապված Ընկերության մասին տեղեկությունները փոխանցում է <<ԱՔՌԱ Քրեդիտ Ռեփորթինգ>> ՓԲԸ (Վարկային բյուրո):

## 2.ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

2.1 Սույն համաձայնագիրը ուժի մեջ է մտնում Ընկերության կողմից վավերացման պահից և գործում է մինչև Ընկերության կողմից կնքված պայմանագրով նախատեսված պարտավորությունների ամբողջ ծավալով կատարումը:

2.2 Սույն Համաձայնագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

## 3. Ընկերության հասցեն, բանկային վավերապայմանները՝

Ընկերության անվանումը՝ Նորմա-Քարտ ՍՊԸ

Հասցեն՝ ք. Գյումրի 26 Կոմիսարների 90

Սպասարկող բանկի անվանումը. Ինեկոբանկ ՓԲԸ, Գյումրի մ/ճ

Հ/Հ 2050122202748-1001

ՀՎՀՀ 05533538

տնօրեն Գալուստ Թերզյան

(ստորագրություն)

1. **ՎՃԱՐՄԱՆ ՊԱՀԱՆՋԱԳԻՐ՝ N**

*(պայմանագրի կատարման ապահովում)*

2. Ներկայացման ամսաթիվը՝ "___" ___ 20___թ.

3. Ընկերություն (այսուհետ՝ վճարող)՝ **Նորմա-Քարտ ՍՊԸ**

4. Վճարողի բանկը՝ **ԻնեկոԲանկ ՓԲԸ, Գյումրի մ/ճ**

5. Վճարողի հաշվի համարը՝ **205012202748-1001**

6. Վճարողի ՀՎՀՀ՝ **05533538**

7. Վճարողի ՀԾՀ՝ **7609470074**

8. Շահառու՝ **<< Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Մարմաշեն համայնքապետարանի աշխատակազմ>> ՀԿՀ**

9. Շահառուի ՀՎՀՀ՝ **05546014**

10.Շահառուի բանկը՝ **ՀՀՖՆԳՎ**

11.Շահառուի հաշվի համարը /հշ.N/ **900212364096**

12.Գումարը թվերով և բառերով՝ **65489 (վաթսունհինգ հազար չորս հարյուր ութսունինը) ՀՀ դրամ**

13.Արժույթը (բառերով և կոդով)՝ **ՀՀ դրամ**

14.Գործարքի /վճարման/ նպատակը՝ **Պայմանագրի ապահովում**

15.Պայմանագրի ծածկագիրը՝ ***«ՄՀ-ԳՀԱՊՁԲ-19/6-1***

16.Փաստաթղթերի անվանումը, դրանց համարները, տրամադրման պայմանը 17. կից՝--- էջ

| | |
|---|---|
| 19.ա. Շահառուի ստորագրությունները<br>/____________________/<br>/____________________/<br>19.բ.<br>Կ.Տ. | 18.ա. Վճարողի ստորագրությունները՝<br>/____________________/<br>/____________________/<br>18.բ.<br>Կ.Տ. |
| Կատարված է շահառուի բանկի կողմից<br>20.ա. /____________________/<br>/ստորագրություն/<br>20.բ. Կ.Տ.<br>"___" "Լ-05" 20___թ. | Կատարված է վճարողի բանկի կողմից<br>21.ա. /____________________/<br>/ստորագրություն/<br>21.բ. Կ.Տ.<br>22.Կատարման ամսաթիվը՝ "___" ___ 20___թ. |

«ՆՈՐՄԱ-ՔԱՐՏ» «НОРМА-КАРТ» 05533538